

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Արմավիրի մարզի Փշատավան համայնքի 2013թ. ին կատարած աշխատանքների:

1-ին կիսամյակում հրավիրվել է ավագանու 6 նիստ, Առաջին նիստով փոփոխություն է կատարվել 2013թ բյուջեում:

Դրամական օգնություն է ցուցաբերվել համայնքի 2 անապահով ընտանիքներին, որի համար տրամադրվել է 100000 դրամ:

Համայնքի առևտրի օբյեկտների նկատմամբ պարբերաբար հսկողություն է իրականացվում:

30.01.2013թ կատարվել է շաբաթօրյակ, որի ժամանակ մաքրվել է համայնքի կենտրոնական ճանապարհները՝ կուլտուրայի տան և հարակից այգու տարածքը կուտակված ձյունից:

Խմելու ջրի ջրագիծը բավականին հին է, որի պատճառով անխուսափելի են ջրագծի վթարները: Բավականին աշխատանք է տարվել որպեսզի ձմռանը ինչքան հնարավոր է քիչ լինեն նմանատիպ վթարներ: Բնակչությանը խմելու ջուր է մատակարարվում օրվա ընթացքում 4 ժամյա գրաֆիկով:

2-րդ նիստով գումար է տրամադրվել համայնքի 11 անապահով ընտանիքներին տրամադրվել է 300 000 դրամ դրամական օգնություն:

փոփոխություն է կատարվել 2013 թվականի բյուջեի և հաստիքացուցակի մասին որոշման մեջ:

3-րդ նիստով հաստատվել է Փշատավան համայնքի աշխատակիցների թվաքանակը, աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը:

Դրամական օգնություն է տրամադրվել համայնքի 7 սոցիալապես անապահով ընտանիքների ընդհանուր առմամբ 200000 դրամ:

05.04.2013 թվականին համայնքի բնակիչների , աշխատակազմի ներկայացուցիչների ներկայությամբ ներկայացվեց Փշատավան համայնքում հունվար, փետրվար և մարտ ամիսների ընթացքում համայնքի ղեկավարի կողմից կատարված աշխատանքների հաշվետվությունը:

4-րդ նիստով փոփոխություն է կատարվել Փշատավան համայնքի ավագանու բյուջեի և հաստիքացուցակի մասին թիվ 32-Ն որոշման մեջ: Դրամական օգնություն է տրամադրվել համայնքի սոցիալապես անապահով 9 ընտանիքների ընդհանուր առմամբ 400000 դրամ:

Փշատավան համայնքի հակակարկտային կայանների սպասարկման համար ավագանին որոշում է եռամսյակը 90000 դրամ տրամադրվի:

Հաստատվել է Փշատավանի գյուղապետարանի աշխատակազմի կանոնադրությունը:

Զիջվել է Փշատավան համայնքի բնակիչ Գևորգ Ամիրխանյանի ավտոմեքենայի գույքահարկը:

Համայնքի նոր բնակեցված փողոցները էլեկտրոֆիկացնելու համար տարածք է տրամադրվել էլեկտրոենթակայան կառուցելու համար:

Հաստատվել է համայնքային ծառայության մրցույթային և ստեստավորման հանձնաժողովի ավագանու կազմը:

5-րդ նիստով փոփոխություն է կատարվել <<Փշատավան համայնքի բյուջեի և հաստիքացուցակի >> մասին թիվ 32-ն որոշման մեջ: Փշատավան համայնքի 11 անապահով ընտանիքներին կ տրամադրվել է 325000 դրամ դրամական օգնություն:

5-րդ նիստով Արմավիրի մարզում 2013 թվականի մայիսի 12-ին տեղած կարկուտից տուժած համայնքների օգնության ֆոնդին 400000 դրամ նվիրատվություն է կատարվել:

Փշատավան համայնքը նույնպես տուժել էր այդ օրը տեղած կարկուտից , բայց Փշատավան համայնքը հրածարվեց տրամադրվելիք օգնությունից ի օգուտ առավել շատ տուժած համայնքների:

Համայնքի գյուղամիջյան ճանապարհների մեծ մասը անանցանելի են, այս վիճակը մերմացնելու համար հարթվել և ակազ է լցվել այդ ճանապարհների վրա: 07.03.2013թ. համայնքում իրականացվել է շաքաթոբյակ, որի արդյունքում աղբից մաքրվել է Արգավանդ-Փշատավան ճանապարհահատվածի հարակից տարածքը կուտակված աղբից:

Մարտի 3-10 ը կազմակերպվել է շաքաթոբյակ, որի ընթացքում մաքրվել է գյուղամիջյան այգու տարածքը, սպիտակեցվել է այգու ծառերի բները և կատարվել է ծառերի սանիտարական հատումներ: Ախտահանվել է խմելու ջրի հորը քլորամինով:

Փշատավան համայնքի միջնակարգ դպրոցին վերջին գանգի արդիթով գյուղապետարանը նվիրել է օդափոխանակիչ , նվերներ դպրոցի կոլեկտիվին և շրջանավարտներին` ընդհանուր առմամբ 540000 դրամ

Գյուղապետարանը հսկայական աշխատանք է կատարել ծիրանի բերքահավաքի լիարժեք կազմակերպման համար.

Գյուղում կան հողեր որոնք գտնվում են սահմանային գոտում , գյուղապետարանը կազմակերպել է անցագրերի տրամադրում , որպեսզի ծիրանի բերքահավաքը պատշաճ մակարդակով կատարվի, որի արդյունքում մեծ քանակությամբ ծիրան է արտահանվել է գյուղից:

2013 թվականի 2-րդ կիսամյակում հրավիրվել է 8 ավագանու նիստ , դրամական օգնություն է տրամադրվել համայնքի կարիքավոր ընտանիքներին , զիջվել են համայնք զինճառայողներին պատկանող ավտոմեքենաների գույքահարկը:

<<Փշատավան համայնքի բյուջեի և հաստիքացուցակի մասին >> թիվ 32- Ն որոշման մեջ կատարվել են փոփոխություններ:

Աշխատանքներ են տարվել , որի արդյունքում լուսավորություն է անցկացվել Փշատավան համայնք կենտրոնական ճանապարհի մի հատվածը , նախատեսված է և , որի շարունակությունը կիրականացվի 2014 թվականի ընթացքում:

Ամանորյա տոների առթիվ նվերներ է հանձնվել համայնքի 0-ից 10 տարեկան երեխաներին , համայնքում կատարվել է ամանորյա տոնախմբություն, համայնքում մեծահասակների հանգիստը կազմակերպելու համար վերանորոգվել է խաղասենյակ:

2013 թվականի ընթացքում համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է 120 որոշում, 24 կարգադրություն:

Համայնքի բնակիչներին իրենց դիմումներին ի պատասխան տրամադրվել է 1110 տեղեկանքներ:

2013թվականի հողի հարկի և գույքահարկի հավաքագրումը հետևյալն է՝

2-րդ կիսամյակ	հողի հարկ	5285200 դրամ
	գույքահարկ	1904001 դրամ
	հողի վարձավճար	575800 դրամ
	տեղական տուրք	23800 դրամ
	Խմելու ջրի վարձ.	412200 դրամ

Փշատավան համայնքի հիմնախնդիրներ

1. Փշատավան համայնքի մշակույթի տան տանիքի վերանորոգում:
- 2 Փշատավան համայնքի մշակույթի տան մուտքի աստիճանահարթակի վերանորոգում:
3. Փշատավան Արգավանդ ճանապարհի կապիտալ նորոգում:
4. Համայնքի լիարժեք գազաֆիկացում:

Համայնքի ղեկավար



Ռ. Ստեփանյան